«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«8» սեպտեմբեր 2015թ.

Հաստատում եմ
«Գնումների աջակցման կենտրոնի» ՊՈԱԿ-ի
պետի ժամանակավոր պաշտոնակատար
_____ Հ. Թունյան

ՍՑ-ԳԲԽ-04/14 բողոքը քննող
հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 07.02.2014թ. N 13.1/1660-14 և 08.09.2014թ. N 73-1/[655311]-14 գրություններով ներկայացված «Դիլ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 02234745) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը 07.02.2014թ. N 13.1/1660-14 և 08.09.2014թ. N 73-1/[655311]-14 գրություններով դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Դիլ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

2. «Դիլ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետը, կարծիք ստանալու նպատակով 05.03.2014թ. N 09/032-402 և 11.09.2014թ. N 09/032-1506 գրություններով դիմել է «Դիլ» ՍՊԸ-ին, սակայն ծրարները վերադարձվել են փոստային առաքումն իրականացնող մարմնի կողմից «տեղափոխված է» նշումով: Կենտրոնը վերոհիշյալ գրությունները էլեկտրոնային եղանակով 27.03.2014թ. և 22.09.2014թ. ուղարկել է «Դիլ» ՍՊԸ-ին, սակայն Ընկերությունից պատասխան չի ստացվել:

«Դիլ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԳԲԽ-04/14 բողոքը քննող հանձնաժողովի նիստի օրվա և ժամի մասին, չի ներկայացել 21.11.2014թ. ժամը 15:00-ին և 17.12.2014թ. ժամը 16:00-ին նշանակված հանձնաժողովի նիստերին:

3. ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու)՝ 18.02.2014թ. ԴՎԱ/388 գրությամբ Կենտրոնին է ներկայացրել «Դիլ» ՍՊԸ-ի հետ 11.03.2013թ. կնքված ՇՀԱՊՁԲ-8/2-8 պայմանագիրը միակողմանի լուծելու հիմքերը:

Կենտրոնը, կարծիք ստանալու նպատակով, 18.11.2014թ. N 04/021-1821 գրությամբ դիմել է Պատվիրատուին՝ միաժամանակ խնդրելով տրամադրել տեղեկություն ՀՀ պաշտպանության նախարարության կողմից «Դիլ» ՍՊԸ-ի հետ 11.03.2013թ. կնքված ՇՀԱՊՁԲ-8/2-8 պայմանագրով ստանձնած պարտավորությունները խախտելու հետևանքով Ընկերության նկատմամբ տույժ կամ տուժանք հաշվարկված լինելու և այդ գումարները վերջինիս կողմից վերականգնելու վերաբերյալ:

Կենտրոնում 21.11.2014թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած հանձնաժողովի նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնել է, որ «Դիլ» ՍՊԸ-ն վերոհիշյալ պայմանագրով սահմանված ժամկետում չի մատակարարել «Ծրար A3» տեսակի

ապրանքը: Ընկերությանը հասցեագրված համապատասխան գրություններով ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ապրանքի մատակարարման ժամկետն երեք անգամ երկարաձգվել է, սակայն Ընկերությունը դարձյալ ապրանքը չի մատակարարել, որի հետևանքով Պատվիրատուի կողմից պայմանագիրը միակողմանի մասնակի լուծվել է:

ՍՑ-ԳԲԽ-04/14 բողոքը քննող հանձնաժողովի այն հարցին, թե արդյոք Ընկերության կողմից վերականգնվել է պայմանագրային պարտավորությունները խախտելու հետևանքով պատճառված վնասի, հաշվարկված տույժի և տուժանքի գումարները, Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնել է, որ Ընկերության կողմից նշված գումարները չեն վերականգնվել:

Պատվիրատուն նիստի ժամանակ ներկայացրել է նաև ԵՇԴ/0319/02/14 գործով Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 07.08.2014թ. վճռի պատճենը և հայտնել, որ գումարի բռնագանձման պահանջի վերաբերյալ կողմերի միջև առկա է եղել դատական վեճ և դատարանի վերոհիշյալ վճռով ՀՀ պաշտպանության նախարարության հայցը բավարարվել է: Վճռվել է «Դիլ» ՍՊԸ-ից հօգուտ ՀՀ պետական բյուջե բռնագանձել 1.314.465 ՀՀ դրամ, որից 1.038.062 ՀՀ դրամը որպես պայմանագրի կատարման ապահովում՝ պայմանագրի գնի 10%-ի չափով, 51.903 ՀՀ դրամը որպես պայմանագրով ստանձնած պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու համար նախատեսված տուգանք, իսկ 224.500 ՀՀ դրամը որպես պայմանագրով սահմանված տույժ:

ՀՀ պաշտպանության նախարարությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԳԲԽ-04/14 բողոքը քննող հանձնաժողովի նիստի օրվա և ժամի մասին, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը 17.12.2014թ. ժամը 16:00-ին նշանակված հանձնաժողովի նիստին:

Կենտրոնը 23.01.2015թ. N 04/032-93 գրությամբ դիմել է Պատվիրատուին՝ խնդրելով սեղմ ժամկետում տրամադրել տեղեկություն՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից «Դիլ» ՍՊԸ-ի հետ 11.03.2013թ. կնքված ՇՀԱՊՁԲ-8/2-8 պայմանագիրը միակողմանի լուծելու արդյունքում Ընկերության նկատմամբ հաշվարկված 1.038.062 ՀՀ դրամ տուժանքը, 51.903 ՀՀ դրամ տուգանքը և 224.500 ՀՀ դրամ տույժն Ընկերության կողմից վերականգնելու վերաբերյալ:

Պատվիրատուն 05.02.2015թ. ԴՎԱ/209 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ Ընկերությունից գումարներ բռնագանձելու վերաբերյալ դատարանի վերոհիշյալ վճիռը հանձնվել է կատարման՝ ՀՀ արդարադատության նախարարության ԴԱՀԿ ծառայություն, սակայն վճռի կատարման մասին ԴԱՀԿ ծառայությունից Պատվիրատուին դեռևս տեղեկություն չի տրամադրվել:

4. «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 11.09.2014թ. N 07/032-1497 գրությամբ դիմել է «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու)՝ խնդրելով կարծիք տալ Ընկերությանը Ցուցակում ներառելու հարցի վերաբերյալ:

Պատվիրատուն 07.10.2014թ. ԴԴ-3-Ե-6146 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի և Ընկերության միջև 03.07.2013թ. կնքված ԴԴ-ՇՀԱՊՁԲ-11/3-26-2 պայմանագրի գնման առարկա հանդիսացող գրենական պիտույքները և գրասենյակային նյութերն Ընկերության կողմից պայմանագրով սահմանված ժամկետներում չեն մատակարարվել, որի հետևանքով Պատվիրատուի կողմից վերը նշված պայմանագիրը 31.01.2014թ. միակողմանի լուծվել է:

Ընկերության նկատմամբ կիրառվել են ՀՀ օրենսդրությամբ և պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ, սակայն 25.09.2014թ. դրությամբ վերջինիս կողմից չեն հատուցվել Պատվիրատուին պատճառված վնասները և չեն վճարվել հաշվարկված տույժերն ու տուժանքը:

Ի լրումն 07.10.2014թ. ԴԴ-3-Ե-6146 գրության՝ Պատվիրատուն 14.11.2014թ. ԴԴ-3-Ե-7096 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ վերը նշված պայմանագրով ստանձնած պարտավորությունները խախտելու հետևանքով պատճառված վնասի, հաշվարկված տույժի և տուժանքի գումարներն Ընկերության կողմից չեն վերականգնվել:

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԳԲԽ-04/14 բողոքը քննող հանձնաժողովի նիստի օրվա և ժամի մասին, չի ապահովել

իր ներկայացուցչի մասնակցությունը 17.12.2014թ. ժամը 16:00-ին նշանակված հանձնաժողովի նիստին:

5. ՍՑ-ԳԲԽ-04/14 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 07.02.2014թ. N 13.1/1660-14 և 08.09.2014թ. N 73-1/[655311]-14 գրություններով «Դիլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

Առաջին, ՀՀ պաշտպանության նախարարության և «Դիլ» ՍՊԸ-ի միջև 11.03.2013թ. կնքվել է գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի գնման ՇՀԱՊՁԲ-8/2-8 պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր 1), որի համաձայն՝ ապրանքների մատակարարման վերջնաժամկետ է սահմանվել մինչև 20.04.2013թ.:

- Պայմանագիր 1-ի անբաժանելի մասը հանդիսացող N 1 հավելվածի՝ գնման ժամանակացույցի, 8-րդ չափաբաժնով նախատեսված 47717 հատ 1.669.140,7 (մեկ միլիոն վեց հարյուր վաթսունինը հազար հարյուր քառասուն դրամ յոթ լումա) ՀՀ դրամ ընդհանուր արժեքով «Ծրար A3» ապրանքատեսակը (այսուհետ նաև՝ Ապ-րանք) Ընկերության կողմից վերոհիշյալ ժամկետում չի մատակարարվել:
- ՀՀ պաշտպանության նախարարությունը 13.08.2013թ. ԴՎԱ/2386 գրությամբ դիմել է «Դիլ» ՍՊԸ-ին և հայտնել, որ Պայմանագիր 1-ի համաձայն՝ Ընկերությունն Ապրանքը պետք է մատակարարեր մինչև 2013թ. ապրիլի 20-ը, սակայն չի մատակարարել: Հետևաբար՝ մինչև 26.08.2014թ. Ապրանքը չմատակարարելու դեպքում ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի կողմից կձեռնարկվեն համապատասխան միջոցներ և կքննարկվի հետագա համագործակցության նպատակահարմարության հարցը:
- Պատվիրատուն 14.10.2013թ. ԴՎԱ/3035 գրությամբ «Դիլ» ՍՊԸ-ին հայտնել է, որ անհրաժեշտ է մինչև 2013թ. դեկտեմբերի 1-ը վերացնել պայմանագրային պար-

տավորությամբ առկա խախտումները, իսկ չվերացնելու դեպքում՝ Պատվիրատուի կողմից Պայմանագիր 1-ը միակողմանի կլուծվի:

- Պատվիրատուն 06.12.2013թ. ԴՎԱ/3574 գրությամբ կրկին դիմել է Ընկերությանը և հայտնել, որ ՀՀ պաշտպանության նախարարության և «Դիլ» ՍՊԸ-ի միջև 2013թ. մարտի 11-ին կնքված Պայմանագիր 1-ի համաձայն՝ Ընկերությունը 2013թ. դեկտեմբերի 5-ի դրությամբ չի մատակարարել 47717 հատ «Ծրար A3» ապրանքատեսակը և միաժամանակ նախազգուշացրել է, որ Ապրանքը մինչև 20.12.2013թ. չմատակարարելու դեպքում՝ Պատվիրատուի կողմից Պայմանագիր 1-ը միակողմանի կլուծվի և կկիրառվեն օրենքով նախատեսված բոլոր տույժերը և տուգանքները:
- ՀՀ պաշտպանության նախարարությունը 05.02.2014թ. ԴՎԱ/266 գրությամբ դիմել է «Դիլ» ՍՊԸ-ին և հայտնել, որ համաձայն ՀՀ պաշտպանության նախարարության և «Դիլ» ՍՊԸ-ի միջև 11.03.2013թ. կնքված ՇՀԱՊՁԲ-8/2-8 պայմանագրի՝ Ընկերության կողմից 2013թ. ընթացքում պետք է մատակարարվեին գրենական պիտույքներ, այդ թվում 47717 հատ «Ծրար A3» ապրանքատեսակը, որը չի մատակարարվել:

Վերոհիշյալ գրությամբ Պատվիրատուն Ընկերությանը տեղեկացրել է, որ Պայմանագիր 1-ի 3.1.6 և 7.4 կետերի համաձայն, ՀՀ պաշտպանության նախարարությունը 2014թ. փետրվարի 4-ին միակողմանի մասնակի լուծում է Պայմանագիր 1-ը: Պատվիրատուն Ընկերությանը տեղեկացրել է նաև, որ ծանուցումը ստանալուց հետո վերջինս պարտավոր է 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005240511 հաշվեհամարին փոխանցել 1.314.465,40 (մեկ միլիոն երեք հարյուր տասնչորս հազար չորս հարյուր վաթսունհինգ դրամ քառասուն լումա) ՀՀ դրամ, որից 1.038.062,40 (մեկ միլիոն երեսունութ հազար վաթսուներկու դրամ քառասուն լումա) ՀՀ դրամը որպես պայմանագրի կատարման ապահովման համար նախատեսված տուժանք (կնքված պայմանագրի ընդհանուր գումարի 10%-ը), 51.903 (հիսունմեկ հազար ինը հարյուր երեք) ՀՀ դրամը որպես պայմանագրով ստանձնած պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու համար նախատեսված տուգանք և 224.500 (երկու հարյուր

քսանչորս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամը որպես մատակարարման յուրաքանչյուր ուշացված օրվա համար սահմանված տույժ:

• Կենտրոնը 23.01.2015թ. N 04/032-92 գրությամբ դիմել է ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության Երևանի Շենգավիթի բաժին՝ խնդրելով սեղմ ժանկետում տրամադրել տեղեկություն ԵՇԴ/0319/02/14 քաղաքացիական գործով Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 07.08.2014թ. վճռի կատարման ընթացքի մասին:

Ի պատասխան վերոհիշյալ գրության՝ ԴԱՀԿ ծառայությունը 06.02.2015թ. ԵԿ-242 գրությամբ հայտնել է, որ պարտապան «Դիլ» ՍՊԸ-ից հօգուտ պետական բյուջեի և իրավաբանական անձ հանդիսացող պահանջատերի գումարներ բռնագանձելու վերաբերյալ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության Երևան քաղաքի Շենգավիթ բաժնում հարուցված կատարողական վարույթի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ առկա են սնանկության հատկանիշներ:

Երկրորդ, «ՀՀ դատական դեպարտամենտ» պետական կառավարչական հիմնարկի և «Դիլ» ՍՊԸ-ի միջև 03.07.2013թ. կնքվել է գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի գնման ԴԴ-ՇՀԱՊՁԲ-11/3-26-2 պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր 2):

• Պայմանագիր 2-ի անբաժանելի մասը հանդիսացող N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով, սահմանվել է, որ 1, 4, 15, 16, 31, 33, 40 և 42 չափաբաժիններով, ընդամենը 8 անվանում ապրանքները (այսուհետ նաև՝ Ապրանք) նախատեսվում է գնել 2013թ. 3-րդ և 4-րդ եռամսյակներում:

• Ընկերությունը, խախտելով Պայմանագիր 2-ով ստանձնած պարտավորությունը, նշված չափաբաժիններով նախատեսված 8 անվանում ապրանքները պայմանագրով սահմանված ժամկետներում չի մատակարարել:

• Պատվիրատուն 28.12.2013թ. ԴԴ-3-Ե-7956 գրությամբ Ընկերությանը նախազգուշացրել է, որ մինչև տվյալ աշխատանքային օրվա ավարտն Ապրանքը չմատակարարելու դեպքում՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն, հիմք ընդունելով Պայմանագիր 2-ի 3.1.4 կետը, Պայմանագիր 2-ը միակողմանի կլուծի:

• «Դիլ» ՍՊԸ-ն Պատվիրատուի 28.12.2013թ. ԴԴ-3-Ե-7956 գրությունը ստացել է 31.01.2014թ. և այդ օրվանով Պայմանագիր 2-ը համարվել է միակողմանի լուծված:

• Պատվիրատուն 23.07.2014թ. ԴԴ-3-Ե-4375 գրությամբ Ընկերությանը ներկայացրել է Պայմանագիր 2-ի շրջանակներում չմատակարարված Ապրանքի համար հաշվարկված տույժի, պատճառված վնասի և տուժանքի գումարների վերաբերյալ տեղեկանքներ, որոնց համաձայն՝ Ընկերության նկատմամբ հաշվարկված վնասի չափը կազմել է՝ 124.762 ՀՀ դրամ, տույժը՝ 305.553 ՀՀ դրամ և տուժանքը՝ 453.387 ՀՀ դրամ, ընդամենը՝ 883.702 ՀՀ դրամ:

• Պատվիրատուն 07.10.2014թ. ԴԴ-3-Ե-6146 և 14.11.2014թ. ԴԴ-3-7096 գրություններով Կենտրոնին հայտնել է, որ Պայմանագիր 2-ի լուծման հետևանքով հաշվարկված վնասը, տույժը և տուժանքն Ընկերության կողմից չեն վերականգնվել:

6. ՍՑ-ԳԲԽ-04/14 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 07.02.2014թ. N 13.1/1660-14 և 08.09.2014թ. N 73-1/[655311]-14 գրությունները, ՀՀ պաշտպանության նախարարության 05.02.2015թ. ԴՎԱ/209, 13.08.2013թ. ԴՎԱ/2386, 14.10.2013թ. ԴՎԱ/3035, 06.12.2013թ. ԴՎԱ/3574 և 05.02.2014թ. ԴՎԱ/266 գրությունները, Երևանի Շենգավիթ բաժնի ԴԱՀԿ ծառայության 06.02.2015թ. ԵՎ-242 գրությունը, «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի 07.10.2014թ. ԴԴ-3-Ե-6146 և 14.11.2014թ. ԴԴ-3-Ե-7096 գրությունները, «ՇՀԱՊՁԲ-8/2-8» և «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-11/3-26-2» ծածկագրերով կնքված պայմանագրերը, ինչպես նաև պայմանագրերը միակողմանի լուծելու հիմքերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից

պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 149-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երեք տարի ժամկետով, եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով պատճառված վնասի, հաշվարկված տույժի կամ տուժանքի չափը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը կամ սույն կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը չի վերականգնվել մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը:

Պայմանագիր 1-ի 1.1 կետի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է նույն պայմանագրով և նրա անբաժանելի մասը հանդիսացող N 1 հավելվածով՝ գնման ժամանակացույցով, սահմանված կարգով, նախատեսված քանակներով, ձևով և ժամկետներում ՀՀ պաշտպանության նախարարությանը կամ նրա կողմից որոշված ստացողին՝ ՀՀ ՊՆԱ վարչատնտեսական վարչությանը, հանձնել նույն պայմանագրի N 2 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով, նախատեսված տեսակի և որակի ապրանքներ, իսկ ՀՀ պաշտպանության նախարարությունը պարտավորվել է ընդունել այդ ապրանքները և վճարել դրանց համար:

Պայմանագիր 1-ի 3.1.6 կետի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարությանն իրավունք ունի միակողմանի լուծել նույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Ընկերությունն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագիր 1-ի 3.1.6.1 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Ընկերության կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի մատակարարման ժամկետները:

Պայմանագիր 2-ի 1-ին կետի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է նույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ին կամ նրա կողմից որոշված ստացողին հանձնել նույն պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով, նախատեսված գրենական պիտույքներ և գրասենյակային նյութեր, իսկ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ին պարտավորվել է ընդունել այդ ապրանքները և վճարել դրանց համար:

Պայմանագիր 2-ի 2.2 կետի համաձայն՝ ապրանքը մատակարարվում է նույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան:

Պայմանագիր 2-ի 3.1.4 կետի համաձայն՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն իրավունք ունի միակողմանի լուծել նույն պայմանագիրը, եթե Ընկերությունն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագիր 2-ի 3.1.4.1 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Ընկերության կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե խախտվել է ապրանքի մատակարարման ժամկետը:

Այսպիսով, «Դիլ» ՍՊԸ-ն ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրերով ստանձնած պարտավորությունը, մասնավորապես՝ Ընկերության կողմից բազմիցս խախտվել են Պայմանագիր 1-ով նախատեսված «Ծրար A3» տեսակի ապրանքի մատակարարման համար սահմանված ժամկետները և Պայմանագիր 2-ի անբաժանելի մասը հանդիսացող թիվ 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով, սահմանված 8 անվանում ապրանքի մատակարարման համար նախատեսված ժամկետները:

Նկատի ունենալով, որ Ընկերության կողմից պայմանագրերով ստանձնած վերոհիշյալ պարտավորությունների խախտումները հանգեցրել են Պատվիրատուների կողմից պայմանագրերի միակողմանի լուծմանը, որի հետևանքով հաշվարկված վնասը, տույժը և տուժանքը մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելն Ընկերության կողմից չի վերականգնվել, ուստի գտնում ենք, որ առկա են հիմքեր «Դիլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու համար:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 07.02.2014թ. N 13.1/1660-14 և 08.09.2014թ. N 73-1/[655311]-14 գրություններով «Դիլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը բավարարել՝ Ընկերությանը (ՀՎՀՀ 02234745) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից գնումների գործընթացին մասնակցելու հայտ ներկայացնելու դեպքում, այդ պահից հաշված երեք տարի ժամկետով:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման
բաժնի վարիչ՝ Դ. Դավթյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-04/14 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Գրիգորյան